ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվականի N 137-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Փամբակ համայնքում սկսել 2025-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:

2. Փամբակ համայնքի 2025թ-ի բյուջեում հատկացնել 10 000 000 ՀՀ դրամ գումար՝ 2025թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով: Նշված գումարը պլանավորել բյուջեի պահուստային ֆոնդում, մինչև համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը ավագանու հավանության արժանանալը և կոնկրետ ծախսային ուղղվածություն որոշելը:

3. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն՝ 16 տարին լրացած համայնքի բնակիչ հանդիսացող քաղաքացիները, նրանց ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, հասարակական կազմակերպությունները:

4. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2024-2026թթ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:

2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը ներկայացնել ավագանու հավանությանը.

3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**